



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2011թ. դեկտեմբերի 23-ի թիվ 33/4

ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏԱՍԻԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի
գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել ընդերքի օգտագործման տրամադրման օրինականության և ընդերքի
օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ
ընթացիկ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ԶԱԽԱՐՅԱՆ



Հավելված

Հաստատվել է ՀՀ ՎՊԻ խորհրդի

2011թ. դեկտեմբերի 23-ի թիվ 33/4 որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ
ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Ընդերքի օգտագործման տրամադրման օրինականության և ընդերքի օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունքների վերաբերյալ

Վերահսկողության հիմքը՝ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2011 թվականի գործունեության տարեկան ծրագրի 12-րդ կետը, ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2011թ. հունվարի 21-ի թիվ 2/2 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ ընդերքի օգտագործման տրամադրման օրինականությունը և 2008-2010թթ. ընթացքում ընդերքի օգտագործման համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը (մետաղական հանքեր և հանքերակումներ):

Վերահսկողության առարկան՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի՝ «Ընդերքի պետական տեսչության», «Օգտակար հանածոների պաշարների գործակալության», «Ընդերքի տրամադրման գործակալության» կողմից իրականացված գործառույթների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Վերահսկողության օբյեկտ՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն)

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 2011թ.-ի փետրվարի 7-ից՝ 2011թ.-ի դեկտեմբերի 30-ը:

Վերահսկողությունն ընդգրկող ժամանակահատվածը՝ 2008թ.-ի հունվարի 1-ից մինչև 2011թ.-ի հուլիսի 1-ը ներառյալ:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերը, ինչպես նաև համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության տեսակները:

Վերահսկողության արդյունքները՝

1. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության կողմից իրականացված ստուգումների վերաբերյալ

Նախարարության աշխատակազմի ընդերքի վերահսկողության պետական տեսչությունը կազմավորվել է ՀՀ կառավարության 11.12.2008թ.-ի «ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի վերահսկողության պետական տեսչություն ստեղծելու, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի վերահսկողության պետական տեսչության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1577-Ն որոշմամբ, որը ՀՀ կառավարության 24.02.2011թ. թիվ 148-Ն համաձայն վերանվանվել է «Ընդերքի պետական տեսչություն» (այսուհետ՝ Տեսչություն): Տեսչության կանոնադրական նպատակներից ու խնդիրներից են՝ ընդերքօգտագործման ոլորտում վերահսկողություն իրականացնելու միջոցով ապահովել ընդերքի արդյունավետ օգտագործումը, ՀՀ օրենսդրության պահանջների պահպանումը, ապօրինի ընդերքօգտագործման դեպքերի բացահայտումը և կանխարգելումը, ընդերքի մասին երկրաբանական և այլ տեղեկատվության լիարժեքությունը ու արժանահավաստությունը: Կանոնադրությամբ հաստատվել է նաև Տեսչության կառուցվածքը, որը ներկայացված է թվով 4 տարածքային, այն է՝ «Կենտրոնական», «Հյուսիսային», «Արևելյան» ու «Հարավային» և 3 կառուցվածքային՝ «Իրավաբանական, հաշվետվությունների ընդունման ու վերլուծության», «Երկրաբանական վերահսկողության» և «Մարկշեյթերական վերահսկողության բաժիններ»՝ ստորաբաժանումներով: Տարածքային ստորաբաժանումների վերահսկողության ներքո է գտնվում Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը:

ՀՀ տարածքում 01.01.2010թ.-ի դրությամբ գործել են ընդերքօգտագործման 82 լիցենզիաներ (մետաղական), 01.01.2011թ.-ի դրությամբ՝ 64 լիցենզիաներ, իսկ 01.04.2011թ.-ին դրությամբ՝ 65 լիցենզիաներ: Տնտեսվարող սուբյեկտներին տրամադրված լիցենզիաներով և համապատասխան կնքված պայմանագրերով սահմանված են մի շարք պարտավորություններ, որոնց կատարման նկատմամբ վերահսկողությունը, ՀՀ օրենսդրության և կանոնադրության համաձայն, պետք է իրականացվի Տեսչության կողմից:

Համաձայն Տեսչության կողմից ներկայացված տեղեկատվության, 2009թ.-ի ընթացքում 8 լիցենզիաներ (մետաղական) ունեցող ընդերքօգտագործող կազմակերպություններում իրականացվել են ստուգումներ, որը կազմել է լիցենզիաների ընդհանուր թվի 9.7%-ը, իսկ 2010թ.-ին ստուգվել են 12 լիցենզիաներ (մետաղական) ունեցող ընդերքօգտագործող կազմակերպություններ, որը կազմել է լիցենզիաների ընդհանուր թվի 18.7%-ը:

2009թ.-ին հանքարդյունահանում իրականացնող թվով 3 ընկերություններում («Մեգո Գոլդ», «Գեո Պրո Մայնինգ» ՍՊ և «Չանգեգուրի ՊՄԿ» ՓԲ ընկերություններ) ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի (այսուհետ՝ Նախարար) համապատասխան հանձնարարագրերով Տեսչությանը հանձնարարվել է ստուգում իրականացնել ընդերքօգտագործման պայմանագրային պարտավորությունների կատարման և բնօգտագործման վճարի օբյեկտներ համարվող փաստացի ծավալների չափաքանակների նկատմամբ: Սակայն, Տեսչության կողմից կազմված ստուգման ԱԿՏ-երով անդրադարձել են միայն փաստացի արդյունահանված ծավալներին և այն ներկայացվել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ չհամեմատելով բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվություններով ներկայացված փաստացի ծավալների հետ: Ստուգմամբ չեն անրադարձել ընդերքօգտագործողների կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարմանը, կատարված աշխատանքների համապատասխանությունը հաստատված նախագծերին, ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմանը և կատարմանը:

2010թ.-ին իրականացված 12 ստուգումներից 5-ում («Կուրին», «ԲԱՍՕ մետալ», «Լուխար», «Ռակ Սիներալգ ընդ Մեթալգ Ինվեսթմենթ Արմենիա» ՍՊ և «Բանարոն Փրեշլս Մեթլլգ» ՓԲ ընկերություններում) արձանագրված խախտումների վերաբերյալ ընկերություններին տրվել է գրավոր զգուշացումներ և սահմանել թերությունների վերացման համար 90-օրյա ժամկետ: Համաձայն՝ «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի սահմանված ժամկետում խախտումները չվերացնելու դեպքում Նախարարությունը իրավունք ունի որոշում ընդունել հանքային իրավունքի դադարեցման մասին: Սակայն, տեսչության կողմից հետևողականություն չի ցուցաբերվել և չի պահանջվել տեղեկատվություն թերությունների վերացման վերաբերյալ: Ընդ որում «Լուխար» ՍՊԸ-ի կողմից արդյունքները բողոքարկվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարին և վերջինիս 15.04.2011թ.-ի թիվ 49-Ա հրամանով բողոքը բավարարվել է և ոչ իրավաչափ է ճանաչվել տեսչության կողմից ՍՊԸ-ի նկատմամբ իրականացված վարչական վարույթը:

2010թ.-ին իրականացված 2 ստուգումների («Գ. Արշակյան» և «Հանքաբուրգ» ՍՊԸ-ներ) արդյունքները բողոքարկվել են Նախարարին «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթները չպահպանելու պատճառաբանությամբ, որից հետո ստուգումները դադարեցվել են:

2010թ.-ին, հանքարդյունահանում իրականացնող 3 ընկերություններում («Ախթալայի ԼՀԿ», «Ազարակի ՊՄԿ» ՓԲԸ-ներ և «Մեզո Գոլդ» ՍՊԸ) Նախարարի համապատասխան հանձնարարագրերով Տեսչությանը հանձնարարվել է ստուգում իրականացնել ընդերքօգտագործման պայմանագրային պարտավորությունների կատարման և բնօգտագործման վճարի օբյեկտներ համարվող փաստացի ծավալների չափաքանակների նկատմամբ, սակայն Տեսչության կողմից կազմված ստուգման ԱԿՏ-երով անբարձր են միայն փաստացի արդյունահանված ծավալներին և այն ներկայացվել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ չհամեմատելով բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվություններով ներկայացված փաստացի ծավալների հետ: Պայմանագրային պարտավորությունների կատարման ստուգումներն իրականացվել են թերի:

2. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի օգտակար հանաժոնների պաշարների գործակալության կողմից իրականացված գործառույթների վերաբերյալ

Նախարարության աշխատակազմի օգտակար հանաժոնների պաշարների գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) կանոնադրությունը հաստատվել է ՀՀ կառավարության 31.10.2002թ.-ի թիվ 1588-Ն որոշմամբ: Գործակալությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված և կանոնադրությամբ հաստատված իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- օգտակար հանաժոնների հանքավայրերի հետախուզման տարբեր փուլերում և շահագործման ժամանակ դրանց արդյունաբերական գնահատման նյութերի պետական ընդերքաբանական փորձաքննությունն ու համապատասխան կոնդիցիաների պարամետրերի հաստատումը,
- հանքավայրերի մանրագնին հետախուզման ու վերագնահատման արդյունքներով ընդերքում օգտակար հանաժոնների պաշարների հաշվարկման նյութերի պետական ընդերքաբանական փորձաքննությունը և այդ պաշարների հաստատումն ու վերահաստատումը,
- արդյունաբերական նշանակությունը կորցրած, ինչպես նաև հանքավայրի հետագա երկրաբանահետախուզական և (կամ) շահագործման աշխատանքների ընթացքում օգտակար հանաժոնների չհավաստված պաշարների դուրս գրումը:

Ընդերօգտագործողների կողմից 2008-2011թթ. ընթացքում Գործակալություն են ներկայացվել 35 «Օգտակար հանածոների մետաղական հանքավայրերի կոնդիցիաների հիմնավորման, պաշարների հաշվարկման և հաստատման ու դուրս գրման համար» հաշվետվություններ, որից 19-ի պետական ընդերքաբանական փորձաքննությունները ավարտվել են և կայացվել են որոշումներ:

- Թվով 10 հաշվետվություններ պետական ընդերքաբանական փորձաքննության չեն ենթարկվել և վերադարձվել են հեղինակներին, որով Գործակալության կողմից խախտվել է՝ ՀՀ կառավարության 06.01.2005թ.-ի թիվ 1784-Ն որոշմամբ սահմանված 9-րդ կետի պահանջը, այն է՝ փորձաքննված նյութերը վերադարձվում են հեղինակներին՝ լրամշակման բացասական որոշման ընդունման դեպքում:
- Թվով 6 հաշվետվություններ շուրջ 2-3 տարի փորձաքննության ընթացքում են գտնվում, որով խախտվել է՝ ՀՀ կառավարության 06.01.2005թ.-ի թիվ 1784-Ն որոշմամբ սահմանված 8-րդ կետի գ) ենթակետի պահանջը, այն է՝ փորձաքննության գործընթացի տևողությունը սահմանափակվում է մինչև 120 աշխատանքային օրով:

3. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության կողմից իրականացված գործառույթների վերաբերյալ

Նախարարության աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալությունը կազմավորվել է ՀՀ կառավարության 09.12.2010թ.-ի «ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» (այսուհետ՝ Ընդերքի գործակալություն) թիվ 1526-Ն որոշմամբ, մույն որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվել ՀՀ կառավարության 26.09.2002թ.-ի «ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի երկրաբանական գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1620-Ն և «ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի կոնցեսիոն գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 959-Ն որոշումները: Ընդերքի գործակալության կանոնադրական նպատակներից ու խնդիրներից են՝ հանքային իրավունքների տրամադրման ապահովումը, ընդերքի ռացիոնալ օգտագործմանը նպաստելը, ընդերքի ուսումնասիրման և հանքարդյունահանման արդյունավետ իրականացմանը նպաստելը: Կանոնադրությամբ հաստատվել է նաև Գործակալության կառուցվածքը, որը բաղկացած է թվով 4

կառուցվածքային ստորաբաժանումներից, այն է՝ «Լիցենզիաների, թույլտվությունների տրամադրման բաժին», «Պայմանագրերի բաժին», «Հաշվետվությունների ընդունման և վերլուծության բաժին» և «Երկրաբանական և լեռնային հատկացումների բաժին»:

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից, 2010թ.-ի ընթացքում, ընդերքօգտագործող (ընտրաքային՝ մետաղական հանքավայրեր և հանքերակումներ) ընկերություններում «Ընդերքի օգտագործման տրամադրման օրինականության և 2007-2010թթ. ընթացքում ընդերքի օգտագործման համապատասխանության» նպատակով իրականացված վերահսկողության արդյունքում կազմված ընթացիկ հաշվետվությամբ (հաստատված՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 24.03.2011թ. թիվ 11/1 որոշմամբ) արձանագրվել են՝ ընդերքի տրամադրման, լիցենզային պայմանագրերի կնքման և ստանձնած պարտավորությունների կատարման, լիցենզիաների ժամկետների երկարաձգման վերաբերյալ խախտումները և բացթողումներ: Նախարարության 20.05.2011թ. գրության (թիվ 01/29.4/1 927-11) համաձայն արձանագրված խախտումների և բացթողումների վերացման վերաբերյալ ձեռնարկվել են միջոցառումներ, ազատվել են զբաղեցված պաշտոններից երեք պատասխանատու պաշտոնատար անձիք և կատարվել է կառուցվածքային փոփոխություն:

Վերահսկողության ընթացքում ընտրաքային կարգով ստուգվել են կոնցեսիոն վճարները: Ընդերքօգտագործման (մետաղական) լիցենզիա ունեցող ընկերությունները «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի պահանջով և լիցենզային պայմանագրով պարտավոր են ՀՀ պետական բյուջե տարեկան վճարել կոնցեսիոն միանվագ վճար, որը կախված է ընդերքի տեղամասի չափից: Արդյունքում, թվով 20 ընդերքօգտագործման լիցենզիա ունեցող ընկերությունների համար հաշվարկված կոնցեսիոն վճարը կազմել է 158,979.6 հազ. դրամ, սակայն վճարվել է 79,812.2 հազ. դրամ, կամ չի վճարվել 79,167.4 հազ. դրամ, որը ենթակա է վճարման ՀՀ պետական բյուջե: Ըստ առանձին լիցենզիաների կոնցեսիոն վճարների հաշվարկային և փաստացի վճարման վերաբերյալ ցուցանիշները ներկայացվում են հավելված 1-ում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- «Ընդերքի պետական տեսչության» կողմից իրականացված ստուգումների ընդգրկվածության ցուցանիշը բավականին ցածր է, այսպես. 2009թ.-ի ընթացքում գործել է 82 լիցենզիա (մետաղական), սակայն ստուգումներ են իրականացվել 8 լիցենզիա ունեցող ընդերքօգտագործող կազմակերպություններում, որը կազմել է լիցենզիաների ընդհանուր թվի 9.7%-ը, իսկ 2010թ.-ին գործող 64 լիցենզիաներից (մետաղական) ստուգումներ են իրականացվել 12 լիցենզիա ունեցող ընդերքօգտագործող կազմակերպություններում, որը կազմել է ընդհանուր թվի 18.7%-ը:

- 2010թ.-ին «Ընդերքի պետական տեսչության» կողմից իրականացված 12 ստուգումներից 5-ում արձանագրված խախտումների վերաբերյալ համապատասխան ընկերություններին տրվել է գրավոր զգուշացումներ և սահմանվել թերությունների վերացման համար 90-օրյա ժամկետ: Համաձայն՝ «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի սահմանված ժամկետում խախտումները չվերացնելու դեպքում Նախարարությունը իրավունք ունի որոշում ընդունել հանքային իրավունքի դադարեցման մասին: Սակայն հետևողականություն չի ցուցաբերվել և չի պահանջվել տեղեկատվություն՝ թերությունների վերացման վերաբերյալ:
- 2009-2010թթ. ընթացքում հանքարդյունահանում իրականացնող 6 ընկերություններում հանձնարարվել է ստուգում իրականացնել. ընդերքօգտագործման պայմանագրային պարտավորությունների կատարման և բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների նկատմամբ: Սակայն, «Ընդերքի պետական տեսչության» կողմից կազմված ստուգման ԱԿՏ-երով անդրադարձել են միայն փաստացի արդյունահանված ծավալներին և այն ներկայացվել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ չհամեմատելով բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվություններով ներկայացված փաստացի ծավալների հետ: Ստուգմամբ չեն անրադարձել ընդերքօգտագործողների կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարմանը, կատարված աշխատանքների համապատասխանությունը հաստատված նախագծերին, ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմանը և կատարմանը:
- «Օգտակար հանածոների պաշարների գործակալության» կողմից 10 հաշվետվություններ պետական ընդերքաբանական փորձաքննության չեն ենթարկվել և վերադարձվել են հեղինակներին՝ առանց բացասական որոշման կայացման, որը ՀՀ կառավարության 06.01.2005թ.-ի թիվ 1784-Ն որոշմամբ սահմանված պահանջի խախտում է:
- «Օգտակար հանածոների պաշարների գործակալության»-ը պետական ընդերքաբանական փորձաքննություն անցկացնելու նպատակով ներկայացված 6 հաշվետվություններ շուրջ 2-3 տարի գտնվում են փորձաքննության ընթացքում, որով խախտվել է՝ ՀՀ կառավարության 06.01.2005թ.-ի թիվ 1784-Ն որոշմամբ՝ փորձաքննություն իրականացնելու համար՝ մինչև 120 աշխատանքային օր սահմանված ժամկետը:
- Վերահսկողության ընթացքում ընտրանքային կարգով ստուգվել է ընդերքօգտագործող (մետաղական հանքավայրեր և հանքերակումներ) ընկերությունների կողմից «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով և լիցենզային պայմանագրերով սահմանված կոնցեսիոն

վճարների հաշվարկման, ՀՀ պետական բյուջե վճարման գործընթացը: Արդյունքում արձանագրվել է, որ թվով 20 ընդերքօգտագործման լիցենզիա ունեցող ընկերությունների համար հաշվարկված կոնցեսիոն վճարը կազմել է 158,979.6 հազ. դրամ, սակայն վճարվել է 79,812.2 հազ. դրամ, կամ պակաս է վճարվել 79,167.4 հազ. դրամ, որը ենթակա է գանձման ՀՀ պետական բյուջե:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ եներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը՝

- Այսուհետ, «Ընդերքի պետական տեսչության» տարեկան աշխատանքային պլանը կազմելիս հնարավորինս բարձրացնել ընդերքօգտագործման (մետաղական) լիցենզիաներ ունեցող կազմակերպությունների ընդգրկվածության ցուցանիշը, ինչպես նաև պահանջել ստուգման հանձնարարագրերում նշված հանձնարարությունների լիարժեք կատարում և արձանագրված թերությունների/խախտումների/ վերացման հսկողության հետամուտ լինելը:
- Խստորեն հետևել, «Օգտակար հանածոների պաշարների գործակալության» կողմից իրականացվող գործառույթների համապատասխանությանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված և գործակալության կանոնադրությամբ հաստատված պահանջներին և կարգերին:
- Ձեռնարկել միջոցներ, թվով 20 ընդերքօգտագործման լիցենզիա ունեցող ընկերությունների համար հաշվարկված կոնցեսիոն վճարի մասով չվճարված 79,167.4 հազ. դրամ գումարի ՀՀ պետական բյուջե վճարման ուղղությամբ:
- ՀՀ պետական բյուջե վերականգնվող/վճարվող գումարները փոխանցել ՀՀ վերահսկիչ պալատի անվամբ բացված «Պետությանը պատճառված վնասների փոխհատուցումից մուտքեր» (900005281515) հաշվեհամարին, կամ գանձապետարանի համակարգում բացված այլ եկամտային հաշվին՝ նշելով «96» կոդը:

Համաձայն «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետի, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին զրավոր տեղեկատվություն տրամադրել՝ հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով իրականացված միջոցառումների վերաբերյալ:

NN	Լիցենզիա ունեցող կազմակերպության անվանումը		Լիցենզիայի համարը, ամսյին, ժամկետի ավարտը		Լիցենզիայի ստացման և պայմանա գիր		Միջակայ Է վճարման	
	փորձումնադրյալ (վայրենք)	իրականացման վայրը	Ն187	Պ-169	7,198.5			
9	«Զարցալ Մայրենց» ՓԲԸ	ՀՀ Տավուշի մարզի Լայկոյուղի ոսկու հանքերի պահում	17,02,06թ. 31,12,08թ.	Պ-169 19.07.06	7,198.5		7,198.5	
10	«Կայ-րուսական լեռնահանքային կազմակերպություն» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզում ողտակի հանքաքարի երկրորդ անգամի հետախուզում	N88 05,08,09թ. 23,07,14թ.	Պ 456 03,09,09թ.		1,700.0	170.0 623.3	906.7
11	«Կարդազատ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզի Ըջճի - Ալբուխակամի բազմաբնակարանային հանքերի պահում	N268 08.11.06թ. 30.09.09թ.	Պ-205 28.12.06թ.	544.5	2,426.5		2,971.0
12	«Զանգուրտ Փրեշլու ՄԻՐԵԼ» ՓԲԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաշենի լավայային հանքերի պահում 560 տա	N82 16,06,08 31,05,13թ.	Պ 356 07,07,08		168.0	280.0	448.0
13	«ԳԷԸԱՊ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզի Աղբյուրացի բազմաբնակարանային հանքերի պահում	N269 04,06,07թ. 30,09,09թ.	Պ-250 04,06,07թ.	1,432.0	2,864.0		4,296.0
14	«Ջուրկեն ՎԵԼԼ» ՍՊԸ	ՀՀ Սյունիքի մարզի Սոֆյուի հանքային դաշտի 15 կմ2 տարածք (պրիմա-մայրիցեն)	N50 26,03,08թ. 15,06,12թ.	Պ 322 28,03,08թ.		450.0	750.0	2,250.0
15	«Արմենիան Փրեշլու» ՓԲԸ	ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում Լալար-Կոռք տեղանմանի 350 կմ2 մանկերի ստացումը (պակի և գունավոր մետաղներ)	N52 28,08,07թ. 01,08,12թ.	Պ 313 25,02,08թ.		11,940.0	19,900.0	4,889.2
16	«Արմենիա Ինվեստմենթ» ՓԲԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունի մեջին հողամասի Այրոցի ոսկու հանքերի պահում	N152 24,11,05թ. 31,12,08թ.	Պ-84 06,12,05	7,659.0			7,659.0

NN	Լիցենզիա ունեցող կազմակերպության անվանումը		Լիցենզիայի համարը, ամսաթիվը, ժամկետի ավարտը	Լիցենզայի ցայվանում գիր								Ենթակա է վճարման				
	գործունեության իրականացման վայրը (վայրերը)	ՀՀ Մյունխենի մարզի Կապուտոբուրգ կոմունալ շրջանի մասին համը. դպր. պրոց. մոնիթինգ. հանձնարարական 5450 հա														
17	«Էս Էյ Սիենթալս» ՍՊԸ	ՀՀ Մյունխենի մարզի Կապուտոբուրգ կոմունալ շրջանի մասին համը. դպր. պրոց. մոնիթինգ. հանձնարարական 5450 հա	N81 16,06,08 31.05.2013թ	Պ 366 09.07.08		5,450.0	10,900.0					817.5	1,362.5		14,170.0	
18	«Անգո գոլդ» ՍՊԸ	ՀՀ Արագածոտնի մարզի Թովնանուկի ոսկրո հանքավայր	N15 31.12.06թ. 13.05.12թ.	Պ-198 10.11.06թ.		2,083.5	4,772.0	8,706.0				8,294.0			7,267.5	
19	«Միկ Մետալ» ՍՊԸ	ՀՀ Տավուշի մարզի Արտաշատի պղնձ-տոբիլիտային հանքահանում	N273 22.12.06 30.06.09թ.	Պ-206 22.12.06թ.		800.0	600.0								1,400.0	
20	«Միկ Մետալ» ՍՊԸ	ՀՀ Տավուշի մարզի Կանչաղաբաթի պղնձ-տոբիլիտային հանքահանում	N274 22.12.06 30.06.09թ.	Պ-207 22.12.06թ.		360.0	600.0								960.0	
Ընդամենը						20,246.8	33,924.3	52,559.5	52,249.0			9,819.5	12,623.9	20,567.4	36,801.4	79,167.4



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր

N _____
« _____ » _____ 20 _____ թ.

**ՀՀ ՎԵՐԱՀՄԿԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ի. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ**

**ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ**

**ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ**

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2012թ. հունվարի 9-ի
թիվ 02/23.14/1-12 հանձնարարականի

Հարգելի պարոն Զաքարյան

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը, քննության առնելով ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Ընդերքի օգտագործման տրամադրման օրինականության և ընդերքի օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը հաստատելու մասին» թիվ 33/4 որոշմամբ արձանագրված թերությունները, դրանց վերաբերյալ նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությանը, օգտակար հանածոների պաշարների գործակալությանը և ընդերքի տրամադրման գործակալությանը ներկայացված առաջարկությունների մասով հայտնում է հետևյալը.

1. Համաձայն ընդերքի պետական տեսչության /այսուհետ՝ Տեսչություն/ կողմից ներկայացված գրության՝ Տեսչությունը ստուգման ակտերով անդրադարձել է փաստացի արդյունահանված ծավալներին՝ դրանք համեմատելով բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվություններով ներկայացված փաստացի ծավալների հետ և արձանագրել դրանց տարբերությունը: Սակայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին տրամադրված տեղեկատվությունը պարունակել է միայն տեղեկություններ փաստացի մարված պաշարների ծավալների վերաբերյալ: Նշված թերացումը վերացնելու նպատակով այսուհետ նախատեսվում է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել նաև համապատասխան ստուգման ակտերի պատճենները:


Տեսչության կողմից 2012 թվականի տարեկան աշխատանքային ծրագիրը կազմվել է ընդերքօգտագործող (մետաղական) լիցենզիա ունեցող կազմակերպությունների ընդգրկվածության ցուցանիշի մեծացմամբ: Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից ստուգված ընդերքօգտագործող /մետաղական/ հանքավայրերի ոչ բավարար քանակությամբ ստուգումների անցկացման հանգամանքը բացատրվում է Տեսչությունում մասնագետ-հաստիքային միավորների պակասով: Այս կապակցությամբ շոշափված խնդրի լուծման նպատակով նախատեսվում է վերանայել Տեսչության հաստիքացուցակը՝ ընդլայնելով համապատասխան մասնագետների քանակը:

Ինչ վերաբերում է ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների և դրանց վերացմանը միտված ընդերքօգտագործողներին տրված հանձնարարականների կատարման մասին տեղեկատվություն չպահանջելուն, ապա այսուհետ Տեսչությունը կցուցաբերի պատշաճ հետևողականություն՝ ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետի դրույթներով:

2. ՀՀ վերահսկիչ պալատի կողմից աշխատակազմի օգտակար հանձնների պաշարների գործակալությունում /այսուհետ՝ ՕՀՊԳ/ իրականացված ստուգումների արդյունքում արձանագրված թերությունների և դրանց վերացման կապակցությամբ ներկայացված առաջարկությունների վերաբերյալ ՕՀՊԳ-ի կողմից ներկայացված բացատրագրի համաձայն՝ գործակալությունը առանց բացասական որոշում կայացնելու հաշվետվությունները հեղինակներին վերադարձնելը իրականացրել է միայն այն դեպքում, երբ փորձաքննության հենց սկզբնական փուլում բացահայտվել է օբյեկտի թերուսումնասիրվածության իրողությունը կամ էլ ներկայացված նյութերի բովանդակության և ձևավորման ակնհայտ անհամապատասխանությունը գործող պահանջներին, որով պարզ է դարձել նյութերի հետագա փորձաքննության աննպատակահարմարությունը: Չնայած գործակալության կողմից նման մոտեցումը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1784-Ն որոշմամբ հաստատված «Հետախուզված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկատվության պետական ընդերքաբանական

փորձաքննության կարգ>>-ի 9-րդ կետի պահանջներին, այնուամենայնիվ, ելնելով գործակալությանը ներկայացվող աշխատանքների ծավալներից, հաշվի է առնվել, որ կասեցմամբ կբացառվի ակնհայտորեն ապարդյուն աշխատանքի իրականացումը, և Գործակալության ջանքերը կուղղվի այլ նյութերի փորձաքննությանը: Հետագայում, նշված աննպատակահարմարությունից զերծ մնալու նպատակով, ՕՀՊԳ-ն նախատեսում է վերախմբագրել և հստակեցնել վերոնշյալ կարգի համապատասխան պահանջը:

Ինչ վերաբերում է ՀՀ վերահսկիչ պալատի կողմից նշված՝ թվով 6 հաշվետվությունների պետական ընդերքաբանական փորձաքննությունների ձգձգմանը, հայտնում ենք, որ այն կապված է ՕՀՊԳ-ի աշխատանքային ծանրաբեռնվածության և հատկացված նվազագույն հաստիքային միավորների հետ:



ՕՀՊԳ-ն, սկսած 2008 թվականից միջին հաշվով փորձաքննել է 42 ոչ մետաղական և 6 մետաղական հանքայրերի նյութեր: Վերոնշյալ կարգով նախատեսված փորձաքննության նորմատիվ ժամկետների պահպանման դեպքում այդ աշխատանքների փորձաքննության համար տարեկան պահանջվում էր ընդամենը 3240 աշխատանքային օր, մինչդեռ ՕՀՊԳ-ում առկա 11 հաստիքային միավորներին համապատասխանող աշխատանքային օրերի հանրագումար ռեսուրսը կազմում է 2530 օր: Ակնհայտ է, որ ՕՀՊԳ-ի ներկայիս հաստիքները բավարար չեն նշված ծավալի աշխատանքները նորմատիվ ժամկետներում իրականացնելու համար: Այդ կապակցությամբ նախատեսվում է դիմել ՀՀ կառավարություն՝ ՕՀՊԳ-ի հաստիքները նվազագույնը 3 միավորով ավելացնելու խնդրանքով:

Վերոնշվածից բացի դիտարկվող <<խախտման>> պատճառներից է նաև փորձաքննության ներկայացվող նյութերի ցածր որակը, ինչը հանգեցնում է


փորձաքննության գործընթացի ձգձգմանը՝ նյութերում բացահայտված թերությունները հեղինակների կողմից վերացնելու հետ: ՕՀՊԳ-ն համոզված է, որ փորձաքննության նպատակը ոչ միայն փորձաքննվող նյութերում թերությունների բացահայտումն է, այլև դրանց վերացման ապահովումը՝ Գործակալության հսկողությամբ՝ հեղինակների ուժերով: Հակառակ դեպքում փորձաքննության գործընթացը կդառնա անվերջ և ապարդյուն:

ՕՀՊԳ-ն կփորձի նշված դիրքորոշումը ամրագրել ՀՀ ընդերքի մասին նոր օրենսգրքի ընդունման հետ կապված կատարելագործվելիք ենթաօրենսդրական ակտերում:

3. Աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալությունում /այսուհետ՝ ԸՏԳ/ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացված ստուգման արդյունքում հայտնաբերված և վերը հիշատարկված որոշման հավելված 1-ում նշված տնտեսվարող սուբյեկտներից 10 հանքային իրավունք կրող տնտեսվարող սուբյեկտներին կոնցեսիոն վճարները մարելու նպատակով զգուշացումներ են տրվել օրենքով նախատեսված 90-օրյա ժամկետի սահմանմամբ, որոնց չկատարման դեպքում լիազոր մարմնի կողմից կձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ, ընդհուպ հանքային իրավունքի դադարեցումը: Մնացած հանքային իրավունք ունեցող տնտեսվարող սուբյեկտների լիցենզային պայմանագրերի գործողության ժամկետներն ավարտվել են, և նախարարությունը դրանց վերաբերյալ նյութեր է նախապատրաստում գումարի բռնագանձման հայցով դատարան դիմելու համար: Հայտնում ենք նաև, որ գործակալության կողմից կազմակերպությունների հետ բանակցային գործընթաց է տարվում՝ ընկերությունների կողմից գումարի վճարումները հոծարական, առանց դատական միջամտության կատարելու վերաբերյալ:

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված՝ կոնցեսիոն վճարի մասով պետական բյուջեի 79167.4 հազ. դրամ պարտքից զգուշացման արդյունքում գործակալություն ներկայացված տեղեկատվության համաձայն՝ 2012 թվականի փետրվարի 2-ի դրությամբ մարվել է 11 759 633 դրամ:

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք. Երևան-10, Հանրապետության
Հրապարակ, Կառավարական տուն 2.
Հեռ. 52-19-64. Ֆաքս 52-63-65
Էլ. փոստ: minenergy@minenergy.am
Վեբ կայք: www.minenergy.am

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Ի կատարումն ՀՀ վարչապետի 23.01.2013թ.
թիվ 02/23.16/795-13 հանձնարարականի

Հարգելի պարոն Սարգսյան

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը /այսուհետ՝
Նախարարություն/, քննության առնելով ՀՀ վերահսկիչ պալատի 2011 թվականի
դեկտեմբերի 23-ի թիվ 33/4 որոշմամբ հաստատված՝ Ընդերքի օգտագործման տրամադրման
օրինականության և ընդերքի օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունքների
վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը, հայտնում է հետևյալը.

1. Ընդերքի պետական տեսչությունը 2011 թվականի ընթացքում
ընդերքօգտագործող տնտեսվարող սուբյեկտներում կատարել է թվով 104 ստուգում, որից՝ 8
մետաղական հանքավայրերում և երևակումներում:

Ստուգման արդյունքում կազմվել է բնապահպանական և բնօգտագործման
վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների ստուգման 99 ակտ,
որոնցով բնօգտագործման վճարների գանձումներն ապահովվելու նպատակով դրանք
ներկայացվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ:

Ընթացք է տրվել պետական մարմիններից ստացված 9 գրությունների, կատարվել են
ստուգումներ և արդյունքները տրամադրվել են իրավապահ մարմիններին:

Ստուգման արդյունքները սահմանված կարգով ներկայացվել են նաև ՀՀ
կառավարություն:

Դադարեցվել է 1 տնտեսվարողի գործունեություն:

Ընդերքօգտագործող կազմակերպությունների կողմից ներկայացված աշխատանքային ծրագրերին և արդյունահանման նախագծերին համապատասխան՝ ընդերքօգտագործման աշխատանքների կատարման նկատմամբ տեսչության կողմից տրվել է երկրաբանահետախուզական աշխատանքների առաջնային երկրաբանական և հաշվետվությունում ամփոփված նյութերի հավաստման վերաբերյալ 17 տեղեկանք:

Իրականացվել է ստուգում մետաղական օգտակար հանածո արդյունահանող չորս՝ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ, «Դինո Գոլդ Մայնինգ Բոմֆանի» ՍՊ, «Սագամար» ՓԲ և «Ագարակի ՊՄԿ» ՓԲ ընկերություններում: Արդյունքում կազմվել են բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների ստուգման ակտեր, որոնք ներկայացվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ բնօգտագործման գանձումների ապահովման նպատակով:

Իրականացվել են նաև ստուգումներ երկրաբանահետախուզական աշխատանքների /մետաղական/ լիցենզիաներ ունեցող չորս ընկերություններում /«Մեթլ Պրինս Էլ Թի Դի» կորպորացիա, «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ, «ԱՍՍԱԹ» ՍՊԸ, «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ/:

«Մեթլ Պրինս Էլ Թի Դի» ընկերությունում իրականացված ստուգման արդյունքում կազմվել է ակտ և տրվել է 90-օրյա ժամկետ թերությունների վերացման համար:

«Մոլիբդենի աշխարհ» ՍՊ, «ԱՍՍԱԹ» ՍՊ, «Ագարակի ՊՄԿ» ՓԲ ընկերությունների ստուգման արդյունքում կազմվել է տեղեկանք՝ երկրաբանահետախուզական աշխատանքների առաջնային երկրաբանական և հաշվետվությունում ամփոփված նյութերի հավաստման վերաբերյալ:

Ընդերքօգտագործման՝ երկրաբանահետախուզական աշխատանքների /մետաղական/ լիցենզիաներ ունեցող «Հանքաբուրգ» և «Գ.Արշակյան» ՍՊ ընկերություններում հնարավոր չի եղել իրականացնել ստուգումներ՝ ընկերության տնօրենի կողմից ստուգմանը խոչընդոտելու պատճառով, որի մասին գրությամբ տեղեկացվել է ՀՀ գլխավոր դատախազին:

Ընդերքի պետական տեսչությունը 2012 թվականի ընթացքում ընդերքօգտագործող տնտեսվարող սուբյեկտներում կատարել է թվով 105 ստուգում, որից՝ 9 մետաղական հանքավայրերում և երևակումներում:

Ստուգման արդյունքում կազմվել է բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների ստուգման 61 ակտ, որոնցով բնօգտագործման վճարների գանձումներն ապահովելու նպատակով դրանք ներկայացվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ:

Ընթացք է տրվել պետական մարմիններից ստացված 6 գրությունների, կատարվել են ստուգումներ և արդյունքները տրամադրվել են իրավապահ մարմիններին: Վերջիններիս են տրամադրվել նաև տեսչության կողմից կատարված 4 ուսումնասիրությունների արդյունքները:

Ընդերքօգտագործող կազմակերպությունների կողմից ներկայացված աշխատանքային ծրագրերին և արդյունահանման նախագծերին համապատասխան՝ ընդերքօգտագործման աշխատանքների կատարման նկատմամբ տեսչության կողմից տրվել է երկրաբանահետախուզական աշխատանքների առաջնային երկրաբանական և հաշվետվությունում ամփոփված նյութերի հավաստման վերաբերյալ 18 տեղեկանք:

Մետաղական օգտակար հանածո արդյունահանող երեք՝ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ, «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊ և «Գեգամետ Պլյուս» ՓԲ ընկերություններում իրականացվել է ստուգում, կազմվել են բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների ստուգման ակտեր, որոնք ներկայացվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ բնօգտագործման գանձումների ապահովման նպատակով:

Ընդերքի պետական տեսչությունը 6 տնտեսավարող սուբյեկտների կողմից ուսումնասիրվող 12 մետաղական հանքերնակումների ուսումնասիրությունների ժամկետները երկարաձգելու վերաբերյալ տվել է բացասական եզրակայություն և ներկայացրել է գրկման: Դրանք են՝ «Բերմ Մեթալս» ՍՊԸ, «ԲԱՍՕ ՄԵՏԱԼ» ՍՊԸ /ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք գտնվող Գեղի գետի ավազան, ՀՀ Սյունիքի մարզի Ոսկեձորի ոսկու հանքավայր), «Մարջան Մանինգ Քոնփանի» ՍՊԸ, «Լուվիար» ՍՊԸ /ՀՀ Գեղարքունիքի մարզի Թթուջուր-Ճամբարակի պղնձի երևակում, ՀՀ Կոտայքի մարզի Արզականի տիտանի երևակում, ՀՀ Գեղարքունիքի մարզի Զիլի խմբի քրոմիտների երևակում, ՀՀ Գեղարքունիքի մարզի Տիգրանաբերդի պղնձի երևակում, ՀՀ Սյունիքի մարզի Փխրուտի ոսկու երևակում, ՀՀ Լոռու մարզի Բարդուտի ոսկու հանքերնակում/, «Իմուվարլ Փրոփերթի Սոլյուշնս» ՓԲԸ (ՀՀ Տավուշի մարզի Առվիձորի պղնձի հանքերնակում), «Ար Էս Այ» ՓԲԸ (ՀՀ Վայոց Ձորի մարզի Մուրադասարի պղնձի, մոլիբդենի և ոսկու հանքերնակումներ):

Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի ընդունումից հետո տեսչության կողմից տրվել է 8 վարչական տուգանք՝ 750.0 հազ. դրամ գումարի չափով:

2. Նախարարության աշխատակազմի օգտակար հանածոների պաշարների գործակալություն ներկայացված նյութերի վերադարձման ընթացակարգը կանոնակարգելու նպատակով ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2012 թվականի

նոյեմբերի 27-ի N 01/24.2/5052-12 գրությամբ ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Ուսումնասիրված պաշարների և ընդերքի մասին երկրաբանական տեղեկության պետական ընդերքաբանական փորվաքննության իրականացման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի N1784-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Ինչ վերաբերում է որոշ հաշվետվությունների՝ շուրջ 2-3 տարի փորձաքննության ընթացքում գտնվելուն, տեղեկացնում եմ, որ այդ ժամկետները ձևավորվել են աշխատանքային քննարկումների արդյունքներով հաշվետվությունները լրամշակման նպատակով մի քանի անգամ հեղինակներին ետ վերադարձնելու պատճառով: Միաժամանակ հայտնում եմ, որ գործակալությունում ներկայումս չկա ժամկետանց հաշվետվություն:

3. 2013 թվականի հունվարի 30-ի դրությամբ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից 2011 թվականին իրականացված վերահսկողության ընթացքի վերաբերյալ տեղեկանքում նշված՝ 2008-2010թթ. համար ներկայացված 79167.4 հազ. դրամի կոնցեսիոն վճարների մասով պարտքի դիմաց պետական բյուջե մուտքագրվել է 84963.3 հազ. դրամ կամ 5795.9 հազ. դրամ ավելի գումար, այդ թվում՝ 5163.1 հազ. դրամ այն տնտեսվարող սուբյեկտների կողմից, որոնց հանքային իրավունքները ավարտվել են մինչև ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացված ստուգումները և 79800.2 հազ. դրամ՝ ներկայումս ընդերքօգտագործման իրավունք կրող տնտեսվարող սուբյեկտների կողմից:



ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ